

3581



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Երջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«01» 04 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 080 - 25

Նախաձեռնող՝

Սոս Արզումանյան
ք. Աբովյան, Սևանի փ.4/10

Գործունեությունը՝

Աբովյան քաղաքի Սևանի փողոց 4/10 հասցեում
նախադրվող բազմաբնակարան շենքի կառուցում
Կոտայքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 080 - 25

«08» ապրիլ 2025թ.

**Կոտայքի մարզի Աբովյան քաղաք Սևանի փողոց 4/10 հասցեում
բազմաբնակարան շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	Սոս Արզումանյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Աբովյան քաղաք, Սևանի փողոց 4/10

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ գործունեությունն իրականացվելու է Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Սևանի փողոց 4/10 հասցեում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով Ա1 և Ա2 մասնաշենքերից կազմված բնակելի համալիր, որոնք միացված են միմյանց ստորգետնյա կամրջակներով:

Տարածքում առկա շինությունները համայնքի կողմից տրամադրված քանդման թույլտվությամբ քանդվել են: Հարևանությամբ գտնվող բնակելի շենքերից տարածքի հեռավորությունը կազմում է 7,5-33մ, իսկ սահմանագծից մինչև մոտակա արտադրական նշանակության հողատարածք հեռավորությունը կազմում է 51,52մ:

Նախագծի կազմման համալիր հիմք են հանդիսացել հետևյալ փաստաթղթերը՝



- տեղամասի ինժինե՝րա՝երկրաբանական հետազոտության եզրակացությունը,
 - ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N 1853-24 տրված՝ 27/11/2024թ.:
 Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման համար նախատեսված, իրավունքի տեսակը՝ ընդհանուր բաժնային սեփականություն՝ / N 24092024-07-0158/

Նկարագրական մաս. Բազմաբնակարան շենքի կառուցման համար նախատեսված հողամասը գտնվում է Աբովյան քաղաքի Սևանի փողոց 4/10 հասցեում, դեպի Աբովյան մտնող ճանապարհներից շարունակվող փողոցների խաչմերուկին հարող տարածքում: Համաձայն ինժե՛ներա՝երկրաբանական եզրակացության՝ տեղամասը երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից բարենպաստ է կապիտալ շինությունների կառուցապատման համար: Տարածքը երկար տարիներ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Բուն տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ կամ կենդանատեսակներ չեն հայտնաբերվել, հատման ենթակա ծառաթփային կազմ նույնպես չի լինելու:

Նախագծվող շենքը գերակա դիրք է գրավելու խաչմերուկի քաղաքաշինական իրադրության մեջ և իր ծավալատարածական լուծումներով կազմակերպելու է տարածքի ճարտարապետական և քաղաքաշինական միջավայրը, ինչով էլ պայմանավորված է առաջարկվող շենքի բարձր հարկայնությունը:

Բազմաբնակարան շենքում նախատեսվում է 1 ստորգետնյա /-3,30 նիշ/ 1 հասարակական /+0,00 նիշ/ և 15 վերգետնյա բնակելի տիպային հարկեր / +4,80-+51,00 նիշեր/: -3,30 նիշի հարկում նախատեսվում է ավտոկայանատեղի: Նախագծում աստիճանավանդակների դռները հակահրդեհային են և ինքնափակվող:

Ավտոկայանատեղիի մուտքը ապահովված է լինելու բնակելի թաղամասի կողմից: Շենքի կառուցվածքը նախատեսվում է իրականացնել միաձույլ երկաթբետոնե սյունահեծանային համակարգով, միաձույլ ե/բ ծածկերով, արտաքին պատերը պենզաբետոնի բլոկներով, շարի մեջ կիրառելով ամրանացանց, օդափոխվող՝ ջերմամեկուսիչ շերտով: Երեսապատումը նախատեսվում է իրականացնել տրավերտինի, սև տուֆի և այլ բարձրորակ երեսպատման նյութերի մաքրատաշ սալերի համադրությամբ: Տանիքը նախատեսվում է իրականացնել հարթ կազմակերպված ներքին ջրահեռացումով: Տարածքը նախատեսվում է կամաչապատել և բարեկարգել:

Նախագիծը մշակված է գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան: Ստորև բերված են նախագծված բազմաբնակարան շենքի տեխնիկական ցուցանիշները:

Տեխնիկական տեսական ցուցանիշները՝

- Բնակարանների քանակ՝ 204



- Ավտոկայանատեղիների քանակ՝ 46
- Շենքի ընդհանուր շինարարական մակերես՝ 22531 քմ
- Հողի մակերես 2863 քմ;
- Շենքի կառուցապատում՝ 1020.4 քմ-35.6%
- Կանաչապատում՝ 1460.14 քմ- 51 %
- Անջրանցիկ 382,46 քմ – 13,4 %

Բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումը նախատեսվում է տարածքի հարևանությամբ անցնող ջրագծից, իսկ ջրահեռացումը տարածքով անցնող կոյուղատարը շրջանցելուց հետո կմիացվի կոյուղատարին:

Ստորգետնյա ավտոկայանատեղին կունենա երկակի նշանակություն, որը անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց: Այս հարկում նախատեսված է իրականացնել սանհանգույցներ պատսպարանից օգտվողների համար, այդ թվում նաև մեկ սանհանգույց սահմանափակ կարողությամբ մարդկանց համար: Տվյալ տարածքը ապահովված է լինելու օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ: Աստիճանավանդակներում նախատեսվում է տեղադրել հրակայուն դռներ:

Օդատարները նախատեսված են ցինկապատ թիթեղից, հորիզոնական օդահավաքներին միանալու մասում տեղադրվելու են հրակասեցնող կափույրներ: Բնակարանների սանհանգույցներից և խոհանոցներից նախատեսված են բնական արտածման համակարգեր՝ արտածափչ հորաններում տեղադրվող հրակայուն օդատարներով: Բնակարանների ներսում ցուցադրված կենցաղային օդափոխիչների, ծխահեռացման հովանոցների, օդատարների տեղաբաշխումն ունի խորհրդատվական նշանակություն, այդ պատճառով ծավալաթերթում դրանք ընդգրկված չեն: Բնական արտածման օդատարները հորանի մեջ բարձրանում են 2,5 մ վեջին երկու հարկերի օդատարները հասնում են մինչև հորանի վերի մակարդակը: Նմանհամակարգը թույլ է տալիս խուսափել ծխի տարածումից: Տանիքից դուրս եկող բոլոր օդատարները ջերմամեկուսացվելու են: Տանիքում տեղադրվում են դեֆլեկտորներ:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության և նախագծի փորձաքննական գործընթացի շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսում և դրանց կանխարգելման, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղման միջոցառումների արդյունավետության դիտարկումներ:



Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են՝

- շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:
- օդային ավազանի՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում արտանետումների, հողային աշխատանքների՝ գրունտի քանդման, փորման հետլիցքի հետ,
- հողային, ջրային ռեսուրսների օգտագործման հետ,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների կառավարման հետ:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, շինարարական աղբն է՝ 420 խմ և կենցաղային աղբը՝ 3.36 տ: Շինարարական աղբը ամբողջությամբ կտեղափոխվի համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր:

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- հիմքերի փորման և շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել է ջրցան:

Ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը ուղղորդվելու են պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվելու է շինարարական հրապարակին կից՝ պլաստմասե 25խմ ծավալով: Պարզարանում տեղի է ունենալու մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը օգտագործվելու է տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Աշխատանքները միաժամանակ իրականացվելու է 1600 քմ մակերեսով տարածքի վրա: Տարածքում հողի բերրի շերտը բացակայում է: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից:

Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմելու է 1460.14 քմ:

Եզրափակիչ մաս. Օրենսդրությանը համապատասխան՝ հանրային լուծման իրականացվել են Աբովյան քաղաքի վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային լուծման նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Կոտայքի մարզպետարանի և Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմը, ինչպես նաև



շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է 2120000 ՀՀ դրամ:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
- «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները (կաթսայատուն, վերելակ և այլն) օրենքով սահմանված կարգով ներկայացնել տեխնիկական անվտանգության փորձաքննության:
- Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով, շինարարության ընթացքում՝ ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:



ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Արուսյան քաղաք Սևանի փողոց 4/10 հասցեում նախատեսվող բազմաբնակարան շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված պարտադիր կատարման ենթակա պահանջների իրականացման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Էմաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան